

Résumé

LE RENOUVEAU DE LA LITTÉRATURE ARTISTIQUE
ARMÉNIENNE ET L'IMAGE QU'ELLE REFLÈTE
DES RELATIONS ARMÉNO-RUSSES

SUSANIK NAZARIAN

L'A. reprend en cet article d'une manière synthétique et en les réélaborant, certains thèmes traités par elle dans une série d'articles précédents. Elle s'arrête d'abord sur la signification et les caractéristiques du renouveau littéraire arménien au XVIII^e siècle.

Ce renouveau se distingue d'abord par l'assimilation, de la part arménienne, de certains principes fondamentaux du classicisme européen. Cette approche du classicisme ne se limite pas aux aspects purement formels et comporte un vrai renouveau des contenus, ce qui se révèle surtout par le fait que les thèmes profanes s'introduisent désormais d'une façon irréversible dans la littérature.

Un aspect particulier de cette situation est représenté par le théâtre qui connaît, dans la deuxième moitié du XVII^e siècle, ces premières apparitions timides dans la réalité culturelle de la diaspora arménienne, et qui s'établit définitivement au cours du siècle suivant par l'activité des moines Mekhitaristes de St. Lazare à Venise.

La littérature, surtout la poésie scientifique et patriotique, constituent une autre dimension très importante et caractéristique de cette période.

Dans la deuxième partie de son article, l'A. examine en particulier les manifestations de sympathie de plusieurs écrivains et poètes de l'époque envers la politique caucasienne de la Russie, surtout de Pierre le Grand et de Catherine II, ainsi que les espérances suscitées par cette politique.

ՊԵՏԱԿԱՆ - HISTOIRE

ԹԵՈԴՈՐԱ ՄԱՍԻԿՈՆԵԱՆ
ԿԱՅՍՐՈՒՅԻ ԲԻԻԶԱՆԴԻՈՆԻ*

Երբ Բիւզանդիոնի կայսրը Թէոփիլոս ամուսնութեան տարիքին հասաւ, մայր կայսրուհին Եփրոսինէ, ըստ լինելի առկորութեան՝, սրտեց կայսերական պալատը հաւաքել կայսրութեան գեղանի մանկամարդները, որպէսզի մասնաւոր հանդէսի մը ընթացքին Թէոփիլոս կարենար ընտրել անոնց մէջէն իր ապագայ կողակիցը եւ կայսրուհին:

Այս հաւաքոյթին մասնակցելու համար պայման չէր անպատճառ ազնուական գերդաստանի մը աղջիկ լինել: Բիւզանդացի կայսրերը յաճախ ամուսնացած են ժողովուրդի աղջիկներու հետ. կը բաւէր որ գեղեցիկ լըլար:

Թէոփիլոս, այդ հանդէսի ընթացքին, պիտի շրջէր գեղուհիներու բազմութեան մէջէն, ձեռքը՝ ոսկիէ խնձոր մը բռնած, եւ որուն որ այդ խնձորը տար՝ ան պիտի ըլլար իր կինը եւ կայսրուհին:

Թէոփիլոս եկաւ, անցաւ գեղուհիներու առջեւէն, գիտեց իւրաքանչիւր թեկնածուն եւ կանգ առաւ գեղուհի Կասսիայի առջեւ: Ամէնքը կը խորհէին թէ ա՛յ ընտրութիւնը եղած էր եւ կը սպասէին որ կայսրը ոսկիէ խնձորը յանձնէր ընտրեալին:

Բայց նախ քան ճակատադրական այդ արարքը, կայսրը՝ խօսքը Կասսիային ուղղելով՝ ըսաւ. Իրապէս, վատ բանը կնոջմէ առաջ կու գայ: Այդ ըսելով, կայսրը կ'ողէր ակնարկել Եւայի մեղանչանքին:

* Այս ուսումնասիրութեան ընթացքը խթանողութեան ուղարկած է՝ Հեղինակին մահէն վերջ՝ իր դուստրը: Չայն կը հրատարակենք՝ մեր կողմէ ինչ ինչ լեզուական վերահամարումով: Հասկնալի է որ, Հեղինակը կարելիութիւնը ունեցած չէ զայն վերամշակելու եւ վերատեսնելու մատենագրական ծանօթութիւնները (ԽՄԲ.):

1. Այս ձեռով էին ընտրուած՝ աթենացի ժրեմէ կայսրուհիի որդւոյն Կոստանդին Զ. Միլանաճինի կինը՝ հայազգի Մարիամ՝ 788ին, Նիկիայի Ա.ի որդւոյն Ստաւրակի կինը՝ Թէոփանոյ՝ 807ին, Միքայէլ Գ.ի կինը՝ Եւդոկիա՝ 855ին:

ջեւ խոնարհելու եկան բարձրաստիճան պաշտօնատարները՝ համբուրելով անոնց ծունկերը:

Յարգանքի եւ հաւատարմութեան այս արարողութենէն վերջ՝ կայսրուհին առանձին, ձեռքին մէջ վառած մոմ մը, պալատին պատըշգամը ելաւ, վարը հաւաքուած ժողովուրդին ի տես, եւ երկըրպազեց խաչին, մինչ ժողովուրդը վարէն կ'աղաղակէր՝ «Սուրբ, սուրբ, սուրբ. փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն»:

Ասկէ վերջ Թէոդորա քաջուեցաւ պատշգամէն, հարսանիքի արարողութեան երթալու համար, որ տեղի պիտի ունենար պալատին եկեղեցիին մէջ:

Կայսրը եւ կայսրուհին, պալատական բարձր պաշտօնատարներուն կազմած թափօրին զլուխը անցած, ձեռքերնին վառած մոմեր եւ առաջնորդուած Պատրիարքէն՝ որ կը լսնկարկէր ճամբուն երկայնքին, մտան եկեղեցի: Հոն Պատրիարքը Աստուծոյ օրհնութիւնը հայցող աղօթքներով կայսերական ամուրին տրուխներուն վրայ դրաւ ամուսնութեան պսակը եւ ապա տուաւ անոնց Ս. Հաղորդութեան խորհուրդը:

Այս արարողութենէն վերջ նորապսակ ամուրը, իրենց թագերով, մեկնեցան եկեղեցիէն, ծնծղաներու եւ ուրախութեան քացազանչութիւններու մէջէն՝ դէպի առադաստի սենեակը (παρεστῶς):

Ամուսնութեան երբորդ օրը, Թէոդորա մեծ շուքով բաղնիք առաջնորդուեցաւ: Սա՛ արեւելեան սովորութիւն մըն էր որ մտած էր բիւզանդական կենցաղին մէջ: Կայսրուհին կ'ընկերանային պալատական բարձրաստիճան երեք տիկիններ, ձեռքերնին լռած կարմիր խնձորներ, ի նշան ախրոյ եւ արդասաւորումի: Երբ խումբը աւազանի սենեակին դրան առջեւ սպասեց՝ մինչեւ որ կայսրուհին լողարանէն ելլէր եւ զայն կրկին առաջնորդեցին առադաստի սենեակը:

* * *

Ամուսնութեան եւ թագադրութեան այս ճոխ եւ բարդ արարողութիւններէն վերջ կը սկսէր իշխանութեան մտահոգիչ կեանքը:

Թէոփիլոսի եւ Թէոդորայի ամուսնութեան այս աւանդութիւնը թէեւ իրական հիմք մը ունի, բայց աւելի լաւ հասկնալու համար անոր պատմական նշանակութիւնը՝ պարտաւոր ենք նկատի առնել միաժամանակ անոր բաղկարար մաս կազմող քաղաքական ազդակները:

Արդարեւ, երիտասարդ Թէոփիլոս կայսրը պէտք տւնէր երկրին մէջ իր դիրքը զօրացնելու. որովհետեւ իր հայրը՝ կայսր Միքայէլ Թլուատ՝ դահլ զբաւած էր Արծրունի գերդաստանէն Լեւոն, Հայ-

կազմէ կայսրը սպաննելով: Որով՝ Թէոփիլոս թռի տիրացուած գահի մը ժառանգորդը կ'ըլլար, ինչ որ կրնար ներքին խռովութիւններու եւ ապստամբութիւններու պատճառ դառնալ, ինչպէս պահ մը եղաւ Միքայէլ Թլուատի գահակալութեան ատեն՝ Թովմասի ապստամբութեամբ:

Միքայէլ Թլուատ՝ իր դահակալումը նուիրականացնելու համար, Լեւոն Հայկազնի սպանութենէն անմիջապէս վերջ, դացած եւ քրոնութեամբ վառքէն հանած էր Կոստանդին Զ. Ծիրանածին կայսեր կուսակիցն աղջիկը՝ Նաիրոսինէն եւ անոր հետ ամուսնացած: Այսպէսով՝ Ծիրանածինի մը փեսան դառնալով, կայսերական գահին լուսադրաւումը մասամբ քողարկած կ'ըլլար: Բացի ասկէ, Միքայէլ Թլուատ ջանաց, թէեւ ի տուր, մօտենալ Բիւզանդիոնի հայ շրջանակներուն ալ, իր դիրքը զօրացնելու համար երկարամեայ իր պայքարի ընթացքին՝ Թովմասի ապստամբութեան ժամանակ:

Երիտասարդ Թէոփիլոս չունէր Ծիրանածինի մը հետ ամուսնանալու առաւելութիւնը: Ուստի իրեն կը մնար, իր դա՛հլ անասան պահելու համար, խնամենալ կայսրութեան մէջ զօրաւոր ընտանիքի մը հետ: Եւ Թէոփիլոս հետեւեցաւ իր հօրը փորձած քաղաքականութեան՝ հայ շրջանակներուն մօտենալով:

Թ. դարուն՝ Մամիկոնեան տունը, բիւզանդական կայսրութեան մէջ, կը ներկայանար որպէս զօրաւոր եւ ազդեցիկ իշխանական տուն մը: Մամիկոնեան տան կեդրոնն էր Երիտասարդաքը, Պափաղոնիայի եւ Արմենեակ թեմերու տահմանադրութիւն: Երիտասարդ ծնած էր Թէոդորա, որ կայսրութեան սպարապետ Մանուէլ Մամիկոնեանի եղբոր աղջիկն էր:

Միքայէլ Թլուատի դէմ Թովմասի ապստամբութեան՝ թէեւ Մանուէլ Մամիկոնեան չէր մասնակցած ուղղակի ձեւով, բայց գոնէ

5. Իրենէ կայսրուհին դէմ կազմակերպուած դաւադրութեան մասնակից էր Վարդ պատրիկը՝ Արծրունեաց տոհմէն եւ Արմենեակ թեմի զօրավար: Վարդ պատրիկ՝ աւելի վերջը եղաւ «մոնոստրատիգոս», այսինքն՝ բազմաթիւ թեմերու ընդհանուր հրամանատար: Այս Վարդ պատրիկի գաւակը Լեւոնն էր, որ գահ բարձրացաւ Լեւոն Ե. Հայկազն անունով (813-820): Մոնոստրատիգոս Վարդ պատրիկ Արծրունի թիկնապահներն էին՝ Միքայէլ, Թովմաս եւ Լեւոն: Միքայէլ եւ Թովմաս փեսաներն էին Վարդ պատրիկի, իսկ Լեւոն՝ անոր որդին էր, որ յետոյ զբաւաւ վերոյիշեալ Լեւոն Ե. իսկ Միքայէլ՝ որու կիներ, Թեկը, մեռած էր՝ եղաւ կայսերական պահակազօրքին հրամանատար: Միքայէլ սպաննեց Լեւոն Հայկազն կայսրը 820ի Ծնունդի դիմաց, պալատին մատրան մէջ, եւ գահ բարձրացաւ Միքայէլ Բ. անունով: Միքայէլ՝ Ամուսնացի էր եւ դէ՛լ կը խօսէր յունարէնը, որու պատճառով իր հակառակորդները զինքը կոչեցին «Թլուատ»: Միքայէլի դէմ ապստամբեցաւ Թովմաս եւ ինքզինքը կայսր հռչակեց Կարնոյ կողմերը: Ան Եօթը տարի պայքարեցաւ Միքայէլի դէմ, բայց ի վերջոյ պարտուեցաւ եւ Միքայէլ Թլուատ մնաց միակ կայսրը:

Համակրական վերաբերում մը ցոյց տուած էր: Թովմասի պարտութենէն վերջ Մանուէլ, Միքայէլ Թլուատի վրէժխնդրութենէն վախնալով, ապաստանած էր Պաղտատի Խալիֆային մօտ, որտեղ քանակին հրամանատար նշանակուած էր եւ իբր այդ՝ կ'ապաստակէր բիւզանդական սահմանները: Պաղտատի մէջ ան մեծ համբաւ ունէր որպէս հզօր ռազմավար: Թէոփիլոս, կայսր հռչակուելուն, Պաղտատ զրկեց մասնաւոր առաքելութեամբ իր զատիւարակը՝ Յովհաննէս հայը, որպէսզի Մանուէլը համոզէր Բիւզանդիոն վերադառնալու:

Մանուէլ՝ Բիւզանդիոն վերադառնալուն՝ կայսեր կողմէ նշանակուեցաւ սպարապետ Անատոլիկոն թեմին:

Թէոփիլոսի ամուսնութիւնը Մանուէլ Մամիկոնեանի եղբոր աղջկան Թէոդորայի հետ՝ անժխտելի զօրաւոր նեցուկ մը կու տար երկտասարդ կայսեր: Այդ կը նշանակէր՝ թէ բանակը կայսեր հետ էր:

Ուլ որ կը ճանչնայ Բիւզանդական պատմութիւնը, գիտէ թէ հոն ինչ կարեւոր դեր կը խաղար քանակը, մինչեւ իսկ դահին վրայ կայսրեր բարձրացնելու եւ կամ դանդաղ վար առնելու ատիւման:

Ոսկի խնձորին Թէոդորայի յանձնումին մէջ՝ որքան անոր գեղեցկութիւնը, նոյնքան ալ Մանուէլ հօրեղբայրը (ծելօց) դեր ունեցած էր:

Թէոդորայի հայրն էր Մարինոս Մամիկոնեան զօրավարը, որ բանակին նուիրապետութեան կարգով՝ կու գար անմիջապէս սարապետէն վերջ⁶:

Թէոդորա ունէր երկու եղբայրներ, Վարդ եւ Պետրոնիոս, եւ երեք քոյրեր՝ Կալոմարիա, Մովիա եւ Իրենէ:

Կալոմարիան, այսպէս կոչուած՝ իր գեղեցկութեանը համար, ամուսնացած էր Արշաւիրի հետ, որ օրէնսգէտ էր եւ կայսերական պալատին գանձապետ: Կալոմարիան անբասիր, քարեպաշտ եւ մարդասէր անձ մըն էր: Ան՝ իր ժամանակը կը յատկացնէր կարօտեալներու եւ հիւանդներու այցելելու եւ անոնց օգնութիւն բերելու:

Սովիան՝ ամուսնացած էր Կոստանդին Բարուցիկ հայուն հետ՝ հաւանաբար Բաղրատունեաց գերդաստանէն⁷: Ան պալատական «Վիզլա» գունդին պետն էր եւ յաջորդած էր այդ պաշտօնին մէջ Թէոդորայի եղբոր՝ Պետրոնիոսին: Այդ գունդին հրամանատարութիւնը միշտ հայերու կը տրուէր: Երբ Արաբները 841 թուին արաբացին կայսերածին քաղաքը՝ Ամորիան, Բարուցիկ հոն էր իր գլխուորեն-

6. THEOPHANES CONTINATUS, ex recogn. I. Bekkeri, CSHB, Bonnae, 1838, l. III, 5, pg. 89. Թէոդորայի եւ իր ընտանեկան շրջապատի մասին՝ տես P. CHARANIS, The Armenians in the Byzantine Empire, Lisboa 1963, էջ 23-26:

7. THEOPH. CONT., l. IV, 22, pg. 174-175; Ն. ԱԴՈՆՑ, Թ. ԳԺ., էջ 411 յջ.:

րովը: Քաղաքին անկումին՝ ան ալ նահատակուեցաւ, գերի ինկած ուրիշ քառասուններկու բիւզանդացի զօրավարներու հետ:

Իրենէն ամուսնացած էր Թէոփիլոսի հետ: Թէոփիլոս առեղծուածային անձնաւորութիւն մըն է, որ պատմութեան մշտնջող շրջապատուած՝ կը մնայ: Իր ծագումին մասին բազմաթիւ ենթադրութիւններ կան: Ոմանք կը կարծեն թէ Շապուհ Ամատունի իշխանին որդին ըլլայ, ուրիշներ ալ՝ Թերեւս Շապուհ անունէն խաբուած՝ զայն կը կարծեն պարսիկ: Բայց գիտենք թէ Բիւզանդիոնի հայ աղանդականութիւնը միշտ կ'ամուսնանար հայերու հետ, իրենց ցեղային ինքնութիւնը պահելով, որով կը կազմէին՝ Բիւզանդիոնի մէջ՝ հայկական ամուր խմբակ մը (clan), որ շատ ազդեցիկ եւ զօրաւոր էր արքունիքին մէջ: Թէոդորայի երկու քոյրերը արդէն ամուսնացած էին՝ Արշաւիր եւ Բարուցիկ հայերուն հետ. շատ աւելի հաւանական է որ Իրենէի ամուսինն ալ՝ Թէոփիլոս՝ հայ ըլլար քան թէ պարսիկ⁸:

Բիւզանդիոնի մէջ՝ Մարինոս Մամիկոնեանի ընտանիքը կը բնակէր Սամաթիա թաղամասին մէջ, այնօրուան Հայոց Ս. Գէորգ եկեղեցիին մօտիկ, «Գաստրիա» (Ծաղկաման) կոչուած անպարանքը, ուր կը մնար Թէոդորայի մայրը՝ Թէոկտիստ, զոր կ'անուանէին նաեւ «Փլորինա»⁹: Աւելի ուշ՝ այս անպարանքը վերածուեցաւ վանքի:

Իսկ Մարինոսի եղբայրը, Մանուէլ Մամիկոնեան սպարապետը¹⁰, իր անպարանքն ունէր «Ասպար»ի աւաղանին մօտերը, այժմու «Զուրուր Պոսթան» վայրին «Բեֆեի» կոչուած մզկիթին մօտ:

Թէոդորա Մամիկոնեան՝ իր գեղեցկութեամբ ոչ միայն արքունիքին եւ Բիւզանդիոնի մէջ հռչակաւոր էր, այլ եւ ամբողջ կայսրութեան մէջ գրեթէ անզուգական էր:

Կը պատմուի՝ թէ օր մը Երբ Քորսոպայի Օմայեան արաբ էմիրին պատուիրակը, նշանաւոր արաբ բանաստեղծ Մահեմէ-Կադալ՝ Թէոփիլոս կայսեր մօտ կը խօսակցէր երկու երկիրներուն յարաբերութիւններուն եւ Պաղտատի Աբբասեան Խալիֆային դէմ պայքարի միջոցներ փնտռելու մասին, յանկարծ կայսերական սենեակը կը մտնէ կայսրուհի Թէոդորան: Անոր գեղեցկութենէն յափշտակուած՝ արաբ բանաստեղծը պահ մը խօսակցութեան թելը կը կորսնցնէ, ինչ որ՝ կայսեր առջեւ՝ արքունական կենցաղավարութեան հանդէպ մեծ մեղանշում մըն էր: Կայսրը նկատելով այս պարագան, զարմացած կը հարցնէ թէ ինչ էր այդ ուշաթափութեան պատճառը: Մահեմէ-Կադալ կ'ըսէ.

8. Հմտ. Ն. ԱԴՈՆՑ, էջ 408:

9. THEOPHANES CONTINUATUS, ամգ:

10. Իր մասին՝ THEOPHANES CONTINUATUS, III, 19, էջ 110-111, 168; GENESIUS, ex recogn. C. Lachmanni, Bonnae, 1834, l. III, էջ 52:

18. ԲԱԶՄԱՎԵՊ 1982

— Տէր կայսր, ես սքանչալի եւ ուշքս կորսնցուցի ի տես կայսրուհիին կախարդական գեղեցկութեան¹¹ :

Թէոդորա եւ Թէոփիլոս ունեցան բազմաթիւ դաւակներ, որոնց առաջինը՝ Կոստանդին՝ մեռաւ մանուկ տարիքին, պալատին աւագանին մէջ խեղդամահ : Կոստանդին թաղուեցաւ Ս. Առաքելոց եկեղեցին, ուր՝ աւելի վերջ՝ իր քով թաղուեցաւ իր քոյրը Մարիամ :

Կոստանդինէն վերջ՝ Թէոդորա ունեցաւ իրերայաջորդ հինգ աղջիկներ՝ Մարիամ, Թեկղ, Աննա, Անաստաս եւ Պողեբերիա :

Թէոփիլոս եւ Թէոդորա՝ պահ մը յուսահատած՝ դահաժառանգ արու դաւակ մը ունենալէն, մտածեցին դահաժառանգ նշանակել Մարիամի ամուսինը՝ գեղեցիկ Ալեքս-Մուշեղը, Մամիկոնեան զերդաստանէն :

Ալեքս-Մուշեղ Սիկիլիոյ բիւզանդական բանակին սպարապետն էր եւ հոն կը կռուէր արաբներուն դէմ :

Բայց հանգամանքները փոխուեցան, երբ Թէոդորա վերջապէս ունեցաւ արու եօթներորդ դաւակ մը՝ Միքայէլը, որ կայսր եղաւ իր կարգին՝ Միքայէլ Գ. անունով : Մինչ այդ՝ Մարիամ մեռած էր եւ թաղուած արծաթէ դադարի մը մէջ, Ս. Առաքելոց եկեղեցին, իր վաղամեռիկ եղբոր քով : Իսկ Ալեքս-Մուշեղ՝ իր վիշտէն՝ մոռած էր Խրիստոսի մէջ վանք մը : Ժ.Գ. դարուն, երբ Յաջակիրները կողմնակից էին Բիւզանդիոնը, Ս. Առաքելոցի արքայական դամբարաններն ալ դատարկեցին իրենց հարուստ պարունակութենէն, մեռելները պղծելով :

Թէոդորա՝ Բիւզանդիոնի մեծ եւ նշանաւոր կայսրուհիներէն մին եղաւ : Թերեւս նոյնքան մեծ՝ որքան Յուստինիանոս կայսեր կինը, նշանաւոր Թէոդորա Ա.ը, թէպէտեւ այս վերջինիս մասին կը շարախօսէ պաղեստինցի Պրոկոպիոս պատմիչը՝ Զ. դարուն :

Որքան ատեն որ Թէոփիլոս ողջ էր, Թէոդորա կը բաւականանար կայսրուհի իր դերին մէջ ամփոփուելով եւ ընտանեկան պարկեշտ կենցաղ մը վարելով, ինչ որ իր ամբողջ կեանքի ընթացքին ալ շարունակեց : Նոյնիսկ իր հակառակորդները կ'ընդունին իր այս բարոյական յատկութիւնը, Բիւզանդիոնի արքունիքին պէս սպակաճած միջավայրի մը մէջ : Թէոդորա ունէր, սակայն, շատ ուժեղ անհատականութիւն մը : Նա, իր կնոջական սրբայնութեամբ, անտարբեր էր մնացած պատկերապաշտութեան իր զղացումներուն մէջ, այս դեռնին վրայ հետեւելով իր մօր՝ Թէոկտիստի օրինակին, իր ամուսինէն՝ Թէոփիլոսէն զաղտնի :

11. AHMED IBN MOHAMMED AL MAKKARI, A History of the Mohammedan Dynasties in Spain, London 1840-1843, II, pg. 114-115.

Թէոդորա, իր բազմաթիւ ծննդաբերութիւններուն միջեւ, կը դրադէր նաեւ առեւտրական ձեռնարկներով, դարձեալ իր կայսր ամուսինէն զաղտնի : Առեւտրական իր գործունէութիւնը՝ ի յայտ կը բերէ իր տնտեսական յատկութիւնները եւ վարչական կարողութիւնները : Թէոփիլոսի մահուան, 842ին, կայսերական դանձր գրեթէ պարապ էր : Թէոդորա, պահին տասնվեց տարուան լնամակալութենէն ետք, 858 թուականին, երբ կայսերական պալատին Ոսկեարահին (Χρυσορραχινον) մէջ հաւաքուած ծերակոյտին ներկայացուց կայսրութեան ելեւմտական հաշուետուութիւնը, կայսերական դանձր կը պարունակէր մօտաւորապէս 500 թոն ոսկեդրամ՝ 24 կարատոնց, ինչ որ կ'ընէ այսօրուան սակով աւելի քան տասը միլիարդ զուկեբրական Փրանք : Թէոդորայի իմաստուն տնտեսութիւնը եւս աւելի կը շնչուի, եթէ ըսենք թէ այդ դարուն՝ բիւզանդական կայսրութեան եկամուտը չորս միլիարդ Փրանքէն աւելի էր տարին : Թ. դարու կէսերուն (852) բիւզանդական ոսկեդրամը՝ νόμισμα-ն 24 կարատ ոսկի էր : Թէոդորայէն վերջ եկող «Մակեդոնեան» գերդաստանը յաջողեցաւ պահել մինչեւ 1042 նոմիսմային լրիւ արժէքը : Այդ հարստութեան վերջին շարաւիղ Զոյէ կայսրուհիին հինգերորդ ամուսինը՝ Կոստանդին Թ. Մոնոմախոսի (1042-1055) օրովն էր որ առաջին անգամ ըլլալով նոմիսման արժեքադրուեցաւ պետական գանձին գէշ մատակարարութեան պատճառով եւ իջաւ 18 կարատ ոսկիի : Իսկ Միքայէլ Է. Դուկասի օրով (1071-1078), նոմիսմային արժէքը ինչաւ 12 կարատ ոսկիի : Ասիկա նախակարապետ նշանը եղաւ կայսրութեան դէպի անկում ընթացքին : Այս թուականը կը համապատասխանէ Մանազկերտի աղիտարի պարտութեան եւ թուրք սելճուքներու արշաւանքին :

Օր մը, Թէոփիլոս կայսրը պալատին պատշգամբէն կը դիտէր Ոսկեղջիւրի նաւահանգիստին եռուղեքը, երբ՝ յանկարծ՝ ապրանքներով ծանրաբեռնուած չքեղ ցուկանաւ մը տեսաւ, որ նաւահանգիստ կը մտնէր : Կայսրը կը դարմանայ եւ կը հարցնէ՝ թէ ո՞վ կ'ընար ըլլալ այն հարուստ վաճառականը, որ իր ապրանքները փոխադրելու համար կը գործածէր այնքան չքեղ ցուկանաւ մը : Անմիջապէս փոքր քննութիւն մը ընել կու տայ եւ երեւան կ'եղէ՝ որ այդ հարուստ վաճառականը նոյնիքն կայսրուհի Թէոդորան էր :

Թէոփիլոս, որ իր իսկութեանը մէջ պարկեշտ եւ ուղղամիտ մէկն էր, այլապէս՝ կ'ըսէ իր շուրջիներուն. «Կայսր ըլլալա զիտէի, բայց առեւտուրով դրադիրա կ'անդիտանայի», եւ կը հրամայէ ցուկանաւին դրաւումը, կը կշտամբէ իր տիրելի կայսրուհին՝ որ գահէն իջած, հասարակ մահկանացուի մը նման՝ առեւտուրով կը դրադէր : Հաւանաբար՝ այդ օրը՝ Թէոդորա վերջիշած ըլլալ հոովմէացի Վեսպասիանոս կայսեր խօսքը՝ «դրամը հոտ չունի», եւ խորհած՝ թէ ան «դասակարգ ալ չունի» :

Արաբներուն առջեւ՝ Ամորեայի բիւզանդական պարտութենէն մեծապէս դժգոհած եւ յուսահատ, Թէոփիլոս կայսրը՝ հաղիւ տարին բոլորած՝ մեռաւ 20 Յունուար 842ին, գահը ձգելով իր երեք տարեկան Միքայէլ որդւոյն։ Սակայն կայսրը՝ նախ քան մեռնելը՝ նշանակեց մանուկ կայսեր խնամակալները, որոնք կայսրութեան վարչութիւնը ձեռք առին։ Այս խնամակալներն էին կայսրուհի Թէոդորան, անոր եղբայրը՝ Վարդ Մամիկոնեան կեսարը¹², Մանուէլ Մամիկոնեան սպարապետը եւ Աւագ Լոգոթետ Թէոփիլոս ներքինին¹³։

Այս թուականէն կը սկսի Թէոդորայի համար ծաւալուն եւ փոթորկալից քաղաքական գործունէութիւն մը, կայսրուհի եւ կայսրութեան խնամակալի իր դերերուն մէջ։

Թէոփիլոսէ նշանակուած չորս խնամակալներէն Աւագ Լոգոթետ՝ Թէոփիլոս ներքինին այն անձն էր՝ որ նպաստած էր Միքայէլ թըլուատին՝ Լեւոն Ե. ը սպաննելու. այդ պատճառով ղինք կը նկատէին՝ կայսերական Ամորեան տան հաւատարիմ ծառայող մը, որ խնամակալներու խորհուրդին մէջ կայսրուհիին ամուր նեցուկ մը կը հանդիսանար։ Որպէս ներքինի, իր փառասիրութիւնը՝ ամենազօր Լոգոթետ մը ըլլալու սահմանէն անդին չէր անցներ։ Արդէն՝ Բիւզանդիոնի մէջ՝ պետական բարձր պաշտօնները յօժարաբար կը յանձնուէին ներքինիներուն։ Անոնց Ֆիդիքական վիճակը ապահովութիւն մըն էր՝ չափազանց փառասիրական միտումներու դէմ։ Ներսէս հայն ալ՝ ներքինի՝ եղաւ Մեծն Յուստինիանոս կայսեր ամէնէն կարեւոր մէկ գործակատարը, նոյնիսկ Խտալիոյ փոխարքայ նշանակուեցաւ բարբարոսներու դէմ կայսրութիւնը պաշտպանելու համար՝ Զ. դարուն։

Կայսրուհի Թէոդորայի՝ որպէս աւագ խնամակալ՝ մեծագոյն գործերէն առաջինը եղաւ «Պատկերապաշտութեան» վերահաստատումը, 19 Փետրուար 842ին։ Այսպէս ան վերջ կը դնէր երկարամեայ պատկերամարտութեան՝ որ կայսրութեան ոյժերը կը ջլատէր։

Թէոդորա, Թէոփիլոսի ողջութեան իսկ, գաղտնաբար պատկերներու պաշտամունքին հետեւող մըն էր։ Բայց իր այս պաշտամունքը բացէ ի բաց հրապարակելու քաջութիւնը ունեցաւ իր պատկերա-

12. Եթէ Վասիլ Արչակունին՝ աւելի ծանօթ Վասիլ Մակեդոնացի անունով՝ սպաննած ըլլար Միքայէլ Գ. կայսրը 867ին, կայսերական գահին յաջորդութիւնը ըստ կանոնին՝ պիտի դարձար Վարդ Մամիկոնեան կեսարին։ Եւ Մամիկոնեան դարձաւոր տունը իրեն արժանի գերագոյն դիրքի մը պիտի հասնէր։ Բայց միշտ ալ սեւ ձեռք մը արգելք է եղած Մամիկոնեաններուն՝ որ Թագաւորի արքայական տոհմ մը ըլլային, ըլլա՛յ Հայաստանի, ըլլա՛յ Բիւզանդիոնի մէջ։ Վասիլ Մակեդոնացին իր հաշիւը լաւ էր ըրած։ Նախ քան Միքայէլ կայսրը սպաննելը, սպաննեց հաւանական գահաժառանգը՝ Վարդ կեսարը՝ 866ին։ Այսպէս իրեն՝ Վասիլի՝ դահ բարձրանալուն այլեւս արգելք չէր մնար։

13. THEOPHANES CONT., IV, 1, pg. 148.

մարտ ստուանին մահէն վերջ, երբ խնամակալ Թէոփիլոս ներքինին, բիւզանդացի պատկերապաշտ կղերին մէկ մասին ազդեցութեան տակ, քաջալեր կանգնեցաւ կայսրուհիին այս ուղղութեամբ հակումներուն։

Պատկերապաշտութեան վերահաստատումով՝ Թէոդորա կ'ուզէր միեւնոյն ատեն իր ժողովրդականութիւնը ընդարձակել մանաւանդ արքունիքի եւ կայսերական վարչութեան յոյն շրջանակներուն մէջ, զանոնք իր կողմը շահելով, ինչ որ՝ անտարակոյս՝ կայսրութեան աւագ խնամակալի իր դիրքը կը գորացնէր։ Ասկից օգտուելով աւելի դիւրաւ կրնար արգելք ըլլալ՝ որ իր դեռատի գաւազը Միքայէլ որդիներու ազդեցութեան չենթարկուէր։ Այս տեսակէտէն՝ Թէոդորա կը հետեւէր կայսրուհի Իրենէի օրինակին, կայսերական իշխանութեան ղեկը իր ձեռքին մէջ պահելով։ Թէպէտեւ երբեք Թէոդորա չունեցաւ Իրենէի անդուծ վարմունքը, որ մինչեւ իսկ իր գաւազին չէր փնայած։

Թէոդորա մասամբ յաջողեցաւ, որոշ ժամանակի մը համար, իր քաղաքականութեան մէջ, եւ իր ժողովրդականութիւնը այնքան գորացաւ՝ որ Օրթոտոքս Եկեղեցին փինջ մինչեւ իսկ սրբացուց։

Թէոդորայի մեծութեան գլխաւոր պսակը կազմեց անկայն, քաղաքական, կրօնական եւ պալատական բոլոր հաշիւներէն անդին, Բիւզանդիոնի համալսարանին վերաբացումը, որու իրագործումին համար ան քաջալերեց իր եղբայրը՝ Վարդ կեսարը, որպէսզի ձեռնարկէր այդ վերաբացումին։

Կոստանդնուպոլսոյ համալսարանը հաստատուած էր 425 թուականին Թէոդոս Բ. կայսեր օրով եւ Աթէնքի, Աղեքանդրիոյ, Անտիոքի, Եգեսիպի եւ Կեսարիոյ համալսարաններուն հետ կը կազմէր՝ բիւզանդական կայսրութեան լոյսի վառարաններու շարքին մէկ օղակը։ Այս համալսարաններուն մէջ կ'աւանդուէին հելլենական փիլիսոփայութիւնը, իրաւագիտութիւնը եւ բնական գիտութիւնները։

Յուստինիանոս կայսեր կեդրոնաձիգ քաղաքականութիւնը, Զ. դարուն, աղիտաբեր եղած էր գիտութեանց այս ակաթիւններուն համար։ Այդ կայսրը արդէն կը գոցէր 529ին Աթէնքի համալսարանը եւ կ'արգելէր փիլիսոփայութեան եւ իրաւաբանութեան ուսուցումը միւս համալսարանները կը գործէր, ան ալ կրօնական իշխանութիւններու խիստ համալսարանը կը գործէր, ան ալ կրօնական իշխանութիւններուն խիստ հակողութեան տակ։ Բայց այս համալսարանն ալ չուտով կորսնցուց իր փայլը ու մոռացութեան տրուեցաւ եւ ջրացաւ։ Հոն գործող գիտութիւնները չորս հովիւներն ցրուած աւ տարաբերութեան էին եւ հելլէն դիտութիւններու ուսուցումը արգիւրուած էր՝ անպարզեւ եւ անուսումնասէր գահակալներու ապիկարութեան պատճառով։ Այս կացութենէն օգտուելով, բիւզանդական եկեղեցին յաջողած էր ամբողջութեամբ արգիւրել հելլէն գիտութիւններու ուսուցումը, որպէս հեթանոսական գիտելիքներ։ Եկեղեցին՝ Բիւզանդացիներու երջան-

կուլթեան համար՝ բաւական կը նկատէր Աստուածաշունչի ուսումը միայն: Արդարեւ՝ բիւզանդական կայսրութեան մէջ, միջոց ալ Եկեղեցիին դերը շատ զօրաւոր է եղած: Ասիկա՝ այն պատճառով որ, բիւզանդական կայսրութիւնը անքակտելի կերպով կապուած էր, հինէն ի վեր տիրող Imperium Romanum-ի դադարին, ժառանգուած հռոմէական կայսրութենէն, որ իր կարգին կը կրէր հելլենական, պարսկական, ասորական, բաբելական, հրէական եւ եգիպտական ազդեցութիւններ: Գ. դարուն՝ հելլենահռոմէական աշխարհը բացարձակ միասնական էր և կայսրը շատ զօրաւոր կերպով չաղկապուած էր աստուածային էութեան դադարին եւ կը ձգտէր տիեզերական իշխանութեան մը: Կայսրը կը նկատուէր իր ժողովուրդներուն հովիւը, առաջնորդը, քարեգործը եւ փրկիչը: Դ. դարուն՝ քրիստոնէութիւնը ընդունելով, կայսրութիւնը աւելի եւս մխրճեցաւ այս դադարին մէջ: Քրիստոնէութիւնը աւելցուց կայսեր իշխանութիւնը, Մեծն Կոստանդինոս նկատուեցաւ մինչեւ իսկ Յիսուսի առաքելներուն ԺԳ.ը (ισοαπόστολος): Այլեւս ան աստուած մը չէր հռոմէական հասկացողութեամբ, այլ կը նկատուէր ուղղակի Աստուծոյ ներկայացուցիչը երկրի վրայ: Կայսրը գրեթէ առարկայ էր կրօնական պաշտամունքի եւ մաս կը կազմէր եկեղեցւոյ ծիսակատարութիւններուն. զանազան առիթներով՝ եկեղեցւոյ մէջ՝ իր առջեւ կը վառուէին ջահեր եւ կը փնկարկուէր իրեն:

Այս պայմաններուն մէջ հելլենական իմաստասիրութիւնը խոտոր կը համեմատէր Եկեղեցւոյ իշխանութեան մտածելակերպին, ինչ որ անընդունելի էր քրիստոնէական Եկեղեցիին. եւ այդ իմաստասիրութիւնը ջնջուեցաւ համալսարանի դասաւանդութիւններէն:

Այս էր կացութիւնը երբ, Թէոդորա կայսրուհին ջաջալերանքով, անոր եղբայրը՝ Վարդ Մամիկոնեան կեսարը, երկու հայ գիտուններու, Յովհաննէս քերականագէտի եւ անոր յղբորդու լեւոն փիլիսոփային ու թուաբանագէտին օժանդակութեամբ, վերաբացաւ Կոստանդնուպոլսոյ համալսարանը, կայսերական պալատի շրջափակը գտնուող Մանեսինա ապարանքին մէջ, 843 թուականին:

Վարդ կեսարը վերահաստատեց հելլենական փիլիսոփայութեան եւ գիտութիւններուն ուսուցումը, փրկելով հելլէն մշակոյթը ընդմիջաւ կորուստէ եւ մոռացումէ:

Ասիկա տեսակ ճիշդագոյն էր Թէոդորայի կողմէ նկատմամբ միւս երկու հայ խնամակալներուն, պատկերներու պաշտամունքը վերահաստատելուն փոխարէն:

Երբ, այսօր Արեւմուտքը կը պարծենայ որպէս հելլէն մշակոյթի ժառանգորդ, այդ կը պարտի երեք հայերու եւ հայ կայսրուհիի մը, որոնք ասկից աւելի քան հազար տարի առաջ, իմաստութիւնն ունեցան Կոստանդնուպոլսոյ մէջ՝ պաշտօնապէս հաստատելու, դարգա-

ցնելու եւ ջաջալերելու հելլենական ուսումը, որ աւելի ետք ճառագայթեց Արեւմուտքի վրայ, հոն բերելով ջաղաքակրթութեան շնորհ մը:

Վարդ կեսարի օժանդակներէն Յովհաննէսը պատմութեան մէջ ծանօթ է «Գրամմատիկոս» (քերականագէտ) տիտղոսով:

Այդ՝ Թ. դարու «քերականութիւն»ը այժմու իմաստով պէտք չէ առնել: Թ. դարուն՝ «քերականութիւն» անունին տակ կը մտնէին՝ լատին ճարտասանութիւնը, լատին քերականութիւնը, հելլենական ճարտասանութիւնը, յունարէն քերականութիւնը, փրաւաբանական դիտութիւնները, փիլիսոփայութիւնը, գրականութիւնը եւ պատմութիւնը: Ան մասամբ կը համապատասխանէր այժմու պատմաբանասիրական գիտութիւններուն: Այս գիտութիւններու խումբը կը կոչէին այդ դարերուն «եռեակ գիտութիւնք», լատիներէն՝ Trivium:

Իսկ ստորգ գիտութիւնները՝ թուաբանութիւնը, երկրաչափութիւնը, աստղաբաշխութիւնը եւ երաժշտութիւնը կը կազմէին այն ինչ որ կը կոչէին «քառեակ գիտութիւնք», «քառեակ գիտութիւնք» կամ Quadrivium:

«Տրիվիում»ը եւ «կուադրիվիւմ»ը միասեղ կը կազմէին «եօթը ազատ արուեստներ»ը (septem artes liberales):

Թէոդոր Բ. կայսեր հաստատած Բիւզանդիոնի համալսարանին երեսունմէկ դասախօսներէն քսան հինգը կը դրաղէր «քերականական» դասաւանդութիւններով, ինչ որ ցոյց կու տայ այդ գիտելիքներուն ընծայուած նախամեծարութիւնը: Արդարեւ՝ քրիստոնէական կրօնքին տարածման եւ տարգացման համար, Եկեղեցին պէտք ունէր ճարտար եւ հմուտ տրամասաններու (διδασκτικοί):

Երբ մէկը կը տտանար «քերականագէտ»ի տիտղոսը, սա կը նշատակէր՝ թէ ան տէր էր ընդարձակ գիտութեան մը, ապա ուրեմն հեղինակաւոր մէկն էր:

Յովհաննէս՝ նախապէս ծառայած էր Թէոփիլոս կայսեր, որպէս անոր դաստիարակը ու նաեւ որպէս անոր գիւնդագէտ պատգամաւորը Պաղատատի Պալլիֆային մօտ: Ան երկու անգամ Պաղատատ դացած էր, նախ՝ Թէոփիլոսի քահանայութիւնը Պալլիֆային ծանուցանելու, եւ ապա հոն ապաստանած Մանուէլ Մամիկոնեանը Բիւզանդիոն հրաւիրելու համար:

Յովհաննէս յաջող կերպով գլուխ հանած էր իրեն վստահուած այս պաշտօնները: Ան, Պաղատատէն վերադարձին, հետը բերած էր Պաղատատի արքունիքին յատակադիրքը, որուն ոճով կայսրը չինել տրուաւ՝ Պատրիկ անունով հայ ճարտարապետին ձեռքով՝ Պիասի պալատը 832 թուականին: Նա մանաւանդ Յովհաննէս յաջողեցաւ Մանուէլ Մամիկոնեանը համոզել՝ Բիւզանդիոն վերադառնալու:

Յովհաննէս՝ կրօնաւոր էր եւ կայսերական պալատի մօտակայ

Ս. Սարգիսի եւ Բազումի (Բակըոս) վանքին (այժմ Քիւզիւք Այա-սոփիա) անդրիւր վանահայրն էր: Այս եղաւ Բիւզանդիոնի Տիեզերական Պատրիարք: Երբ Թէոփիլոս կայսրուհին վերահաստատեց պատկերներու պաշտամունքը, Յովհաննէս հրաժարեցաւ պատրիարքութենէ եւ Վոսիփորի վրայ «Կիլիկոն»ի վանքը քաշուեցաւ, ուր մեռաւ 860 թուականին:

Յովհաննէս քերականագէտը եղբայր մը ունէր՝ Արշաւիր անունով¹⁴, որու գեղեցիկ պալատը Վոսիփորի եզերքին՝ Ս. Փոկաս վանքին մօտը, հանրածանօթ էր «Տրուղլոս» (Τρούλλος) կոչումով:

Տրուղլոս՝ կը նշանակէ «գմբէթ»:

Եթէ այս պալատը կը կոչուէր «Տրուղլոս»՝ պատճառն այն էր որ ան գմբէթազարդ էր, ինչ որ կը նշանակէ թէ Արշաւիր շատ բարձր եւ կարեւոր անձնաւորութիւն մըն էր: Որովհետեւ որեւէ մէկը չէր կրնար Բիւզանդիոնի մէջ իր պալատին եւ կամ ապարանքին վրայ գմբէթ մը սարքել:

Գմբէթը նշան էր իշխանութեան. կայսրը, կայսերական իշխանագործները եւ Եկեղեցին միայն իրաւունք ունէին՝ քրիստոնէական կայսրութեան մէջ՝ գմբէթաւոր շինութիւններու, որպէս իրենց իշխանութեան նշան:

Բիւզանդական դիւցազնավէպի հերոսին՝ Դիգենիս Ակիրիտասի¹⁵ պալատն ալ նկարագրուած է դիւցազնավէպին մէջ որպէս գմբէթազարդ, շէտելու համար հերոսին մեծութիւնը:

Հայոց մէջ ալ գմբէթը, փոխարինուած՝ «կաթողիկէ»ով, Թադաւորական եւ իշխանական պալատներու «Տաճար»ներուն (Aula Magna) վրայ կը դրուէր՝ ի նշան պալատի տիրոջ իշխանութեան եւ զօրութեան: Արդ, եթէ Արշաւիրի պալատը գմբէթաւոր էր, անսարաւոր ան քորաւոր եւ բարձր իշխան մըն էր:

Յովհաննէս, այս պալատին գետնաբարկը, ունէր գիտական աշխատանոց մը ուր, ըստ Յովհաննէսի պատկերապաշտ թշնամիներուն, տեղի կ'ունենային «սաստանայական» գոհաբերութիւններ եւ «կախար-

14. Այս Արշաւիրը պէտք չէ շփոթել Թէոփիլոսի քրոջ Կալոմարիայի ամուսինը Կոլո Արշաւիրին հետ: Այս վերջինս օրէնսգէտ էր եւ կայսերական Գանձապետ, Բայց հաւանական է որ այս երկու Արշաւիրներն ալ ըլլային Կամարական տոհմէն: Պէտք է նկատել որ Բիւզանդիոն հաստատուած հայ ազնուականութիւնը, որոնց արեւելահայերը կ'ըսէին «Հայ-Հոռոմ», միշտ հայերու հետ ամուսնացած են, պահելով իրենց ցեղային միասնութիւնը, որ զօրաւոր ազդակ մը եղած է՝ Բիւզանդիոնի մէջ իրենց գերակշիռ դիրքին:

15. «Դիգենիս Ակիրիտաս» դիւցազնավէպը, Ժ. դարէն, կը համապատասխանէ Հայոց Վաստանցի Դաւիթ՝ դիւցազնավէպին: Դիգենիս եւ Դաւիթ կը կոչուին՝ զարուռ վտանգը նկատուած՝ Արաբներուն դէմ եւ ազգային հերոսներ դարձած են, Դիգենիս Ակիրիտաս դիւցազնավէպը հայերէնի թարգմանուած է վերջերս Հրաչ Բարթիկեանէ (Երեւան, 1978):

դական» ու «գուշակային» հաւաքոյթներ: Իրականին մէջ՝ այս աշխատանոցը միջնադարեան ալքիմիայի աշխատավայր մըն էր, ուր կայսրը Թէոփիլոս կու գար յաճախ՝ ներկայ գտնուելու հոն կատարուած գիտական փորձերուն¹⁶: Քրոնիկագիրը, որ այս պարագան մեղի կը փոխանցէ, դիւրիմացութեամբ կարծած է՝ թէ նոյն վայրին մէջ Յովհաննէս ունեցած ըլլայ իրեն յատուկ ապարանք մը, մինչ յետագայ քրոնիկագիրները նման բան մը չեն յիշեր:

Յովհաննէս սովորական մարդ մը չէր. ան ոչ միայն «քերականագէտ» էր, այլ եւ վարժ էր «գաղտնի» (ésotérique) գիտութիւններուն եւ ալքիմիայի: Ան միջնադարեան իսկական գիտունն էր, ինչպէս պիտի տեսնենք շատ դարեր վերջ՝ Եւրոպայի մէջ, Վերածնունդի շրջանին, Ֆրանսիականերու, Մարթինիսներու, Ալպերթիններու, Լէոնարդոյ տա Վինչիններու շարքով:

Յովհաննէս եւ Արշաւիր գաւազններն էին Բագրատ Աստղաբաշխին (άστρολόγος), որ կայսեր անձնական աստղաբաշխն էր:

Ինչպէս կը տեսնուի՝ Միջին դարու հայ գիտնական գերդաստանի մը դիմաց կը գտնուինք, ուր գործածուած անունները՝ Բագրատ, Յովհաննէս, Արշաւիր, մեղի խորհիւ կու տան Բագրատունի եւ Կամսարական հայ տոհմերուն եւ կամ անոնց հետ խնամիական կապերով կապուած ընտանիքի մը մասին: Որովհետեւ հայ նախարարական տոները միշտ գործածած են իրենց նախասիրած յատուկ անունները՝ սերունդէ սերունդ. Աշոտ, Բագրատ, Գաբրիէլ, Յովհաննէս, Շապուհ՝ Բագրատունիներու մօտ. Մուշեղ, Մանուէլ, Վարդ, Վարդան՝ Մամիկոնեաններու մօտ. Արշաւիր, Ներսէս՝ Կամսարականներու մօտ:

Արշաւիրի գաւազնը Լեւոն, գիտնական ընտանիքի մը մէջ մեծցած ու դարձացած, նշանաւոր գիտուն մը դարձաւ. այն աստիճան՝ որ զինքը կը կոչէին «Թուաբանագէտ» կամ «փիլիսոփայ»: Լեւոնի «Թուաբանագէտ» կոչուիլը ցոյց կու տայ՝ թէ ան հետեւած էր «քառօնիցն արուեստից»:

Յովհաննէս եւ Լեւոն, միասին իրենց գիտութեամբը ամբողջ համալսարան մը կ'արժէին եւ Վոսիփորի եզերքի «Տրուղլոս» պալատը կ'ըլլար տեսակ մը ակադեմիա. անոր ունկնդիրներն էին նոյնինքն կայսրը եւ Փոտ մեծ գիտունը, որու պատրիարքութեան ընթացքին էր որ Բիւզանդիոնի Արեւելեան Եկեղեցին գատուեցաւ Հռոմի Արեւմտեան Եկեղեցիէն, 858 թուականին:

Լեւոնի գիտական համբաւը շուտով տարածուեցաւ կայսրութեան սահմաններէն դուրս, մինչեւ Պաղատա, ուր Աբգարեան Սալիֆան՝ Մամոն՝ Թէոփիլոսէն խնդրեց որ Լեւոնը իրեն ղրկէր, որպէսզի ա-

16. Հմտ. THEOPHANES CONT., I. IV, 7-8, 42 156-157:

նոր գիտութենէն եւ դասերէն՝ արար գիտնականներն ալ կարենային օգտուիլ: Բայց Թէոփիլոս մերժեց այդ փնդորանքին ընդառաջել, քանի որ պատշաճ չէր տեսներ փոխանցել ուրիշներուն բիւզանդական գիտութեան գաղափարները¹⁷:

Լեւոն՝ պահ մը Թեսաղոնիկէի մետրապոլիտ ալ եղաւ, բայց շուտով ձգեց այդ պաշտօնը 843 թուականին, երբ պատկերապաշտութիւնը վերահաստատուեցաւ, եւ վերադարձաւ ուսուցչական եւ գիտական իր գրադումներուն:

Ահա այսպիսի հայեր էին որ Վարդ կեսարի հետ վերաբացին՝ դարերէ ի վեր փակուած Կոստանդնուպոլսոյ համալսարանը, որու առաջին վերատեսուէրը եղաւ Լեւոն Թուաբանադէտը, եւ ուր դասախօսեց նշանաւոր Փոտը:

Երբ ասդին, Բիւզանդիոնի մէջ, հայեր հեղինակաւ դարութիւնը կ'ազատէին կորուստէ եւ մոռացումէ, անդին՝ հեռաւոր Փրանսայի մէջ, միեւնոյն Թ. դարուն՝ հայ ճարտարապետ մը՝ Ժանօթ Մեսցի Օդոյ անունով (Odo le Messin) կը շինէր՝ Կարոլինեան Փրանսայի սրտին նստած՝ Ժէյմինիէ-տէ-Փրէի եկեղեցին, էջմիածնի Մայր Տաճարին յատկապէս վրայ, տալով Արեւմուտքին նոր կառուցածեւ մը: Ուրիշ հայեր՝ որոնց անունները կորսուած են պատմութեան մը շուշին մէջ՝ նոյն Թ. դարուն կը կառուցանէին Լոմպարտիոյ մայրաքաղաքին՝ Միլանոյի մէջ Սան Սաթիրոյի փոքրիկ եկեղեցին, Զուարթնոցի նման եռաշարի եւ կըրոր յատկապէս ուժով՝ ա՛յս ալ Արեւմուտքի համար նորաձեւ կառուցում մըն էր: Թերեւս ուրիշ հայեր ըլլային դարձեալ Թ. դարուն՝ Վենետիկի մօտ՝ Թորչելլոյ կղզիին Սանթա Փոսթա եկեղեցին շինողները, եռաշարի հայ-հռոմ ոճով՝ Սան Սաթիրոյի նման¹⁸:

Լեւոն Թուաբանադէտի մասնաւոր յանձնարարութեամբ եւ անոր ջերմ քաջաբերանքին վրայ էր որ իր աշակերտը Կիւրեղ հնարեց Ռուսերու, Պուղարներու եւ Սերբերու կիրարկած սլաւական տառերը, որպէսզի այդ ժողովուրդները լուսաւորուէին եւ քրիստոնէութիւնը անոնց մէջ տարածուէր: Մինչեւ այսօր ալ այդ տառերը «Կիւրեղեան» գիր կը կոչուին, որոնց վրայ դեռ Լեւոն Թուաբանադէտին շունչը կը սաւառնի, թէեւ այդ ժողովուրդները ասոր գիտակից չեն:

Այս գիրերու գիւտէն վերջ, Կիւրեղ եւ իր եղբայրը՝ Մեթոդիոս՝ Սլաւներու երկիրը գացին քրիստոնէական առաքելութեան: Այս առաքելութիւնը՝ Բիւզանդիոնի կրօնական եւ քաղաքական նպատակներուն չայնօրէն կը ծառայէր: Կոստանդնուպոլսոյ պատրիարքութիւնը իր իրաւասութեան տակ կը քերէր սլաւ քրիստոնեայ հաւա-

17. Հմտ. THEOPHANES CONT., IV, 27, էջ 190:

18. Տես S. DJEVAHIRDJIAN, Les réminiscences de l'architecture arménienne en Occident, «Բաղմալէպ», 134 (1976), էջ 157-197, 268-289:

տացեալներու նոր մեծ քաղմութիւնը, ի մնաս Անտիոքի, Աղեքսանդրիոյ եւ Երուսաղէմի Պատրիարքութիւններուն, որոնք արդէն անկումի վրայ էին: Իսկ փիւզանդական կայսրութիւնը, շնորհիւ այս առաքելութեան, ուղղակի կամ անուղղակի կերպով, հիւսիսի այդ ժողովուրդներուն վրայ կը տարածէր իր ազդեցութիւնը՝ իր հիւսիսային սահմաններուն վրայ անոնց կոռուզան ներկայութեան վտանգը նուազեցնելով:

Կայսրութեան խնամակալ՝ Աւագ Լոգոթետ՝ Թէոփիլոս ներքինին նենգաւոր դործունէութիւն մը ունեցաւ արքունիքին մէջ: Ան, կայսրուհի Թէոդորայի վատահոգութիւնը շահած, սկսաւ նենգօրէն դաւել միւս երկու խնամակալներուն դէմ: Թէոդորա սխալ մը դործեց՝ իր հեղինակութեամբ անոր վատ դործունէութիւնը պաշտպանելով: Այս կացութիւնը պատճառ եղաւ որ արքունիքէն հեռանային կայսրուհիին եղբայրները, Վարդ կեսար եւ Պետրոնիոս, եւ կայսրուհիին հօրեղբայրը՝ ալեւոր սպարապետ Մանուէլ Մամիկոնեան:

Վարդ կեսար քաջուեցաւ մայրաքաղաքին Կոսմիդիոն արուարձանի իր պալատին մէջ՝ քաղաքին հիւսիս-արեւմտեան անկիւնը, Վլախերնի կայսերական պալատին մօտերը (այժմու էյիւսի եւ Այւլանսարայի միջեւ): Իսկ Մանուէլ Մամիկոնեան քաջուեցաւ Ասպարի ջրամբարի մօտակայ իր ապարանքը (այժմ Զուքուր Պոսթան՝ Քեֆելի կոչուած մզկիթին մօտ, Ֆենէրի եւ Ճիպալիի միջեւ):

Այսպէս՝ ազատ ասարեղջ կը մնար Թէոփիլոսի անարգ դործունէութեան, իսկ Թէոդորա՝ ազատած իր հարազատներու հեղինակաւոր հակալիւնէն եւ անսալով Մամիկոնեանի իր ինքնալստահութեան, ուղեց միահեծան կառավարել կայսրութիւնը, ինչպէս իր մէ առաջ ըրած էր աթենացի Պրենէ կայսրուհին, որ իր զաւակին Կոստանդին Զ. Միլանեցին կայսեր աջքերը կուրցուցեր էր, որպէսզի ինքը մնար միահեծան կայսրուհի Բիւզանդիոնի:

Թէոդորա չեղաւ այդքան անխիղճ եւ անզգամ. ան գոհացաւ երկու խնամակալներուն հեռացումով, եւ մտածեց թէ նորահաս կայսրը՝ իր որդին՝ Միքայէլ Գ. ը պետական դործերէ հեռու պահելու լաւագոյն միջոցն էր զայն մղել զեխ եւ անկանոն կեանքի մը, որուն պատճառով Միքայէլ Գ. ծանօթ է պատմութեան մէջ «Գինով» մակդիրով:

Թէոդորա նոյնիսկ միջամուխ եղաւ Միքայէլի զղացական կեանքին մէջ: Պատանի Միքայէլ սիրահարած էր Մարտինակ ընտանիքէն շատ գեղեցիկ եւ ուշիմ Եւդոկիային: Կայսրուհին արգելք եղաւ այդ սիրոյն եւ պտաւ ուրիշ Եւդոկիայ մը՝ իրեն հիւսկապալով՝ որուն հետ ամուսնացուց Միքայէլը, հարսնացուներու հանդէս մը կազմակերպելով՝ ինչպէս ինքը ամուսնացած էր Թէոփիլոսի հետ: Բայց կանխա-

պարտադրեց Միքայելին՝ որ ոսկի է խնձորը տար իր իսկ նշանակած հարսնացուին:

Միքայել, գիտակից՝ իր շուրջը դարձող մեքենայութիւններուն, սկսաւ ընդմիջել: Միւս կողմէ՝ եթէ Մանուէլ սպարապետը քաջուած էր իր ապարանքին մէջ, անխօս ու անզօր հանդիսական մը դարձած իրադարձութիւններուն, պարագան նոյնը չէր Վարդ կեսարին համար, որ մտադրած էր Թէոկտիստը հեռացնել եւ մէջտեղէն բոլորովին վերցնել ու կայսրը հաստատել իր իշխանութեան մէջ:

Վարդ յաջողեցաւ գաղտնիօրէն յարաբերութիւն մշակել Միքայել կայսեր հետ, որ իր հաւանութիւնը տուաւ պատրաստուող դաւադրութեան: Վարդ կեսար՝ պալատին մէջ՝ ունէր իր մեղսակիցները: Նախ իր քոյրը՝ Արշալիքի արքին Կալոմարիան՝ որ կայսերական պալատին մէջ ունէր իր յարկաբաժինը եւ դիւրաւ կրնար հսկել անցած դարձածին: Կար իր փեսան՝ Սմբատը, Բագրատունի տոհմէն, իր Իրենէ դստեր ամուսինը՝ որ այդ միջոցին կայսերական պահակապետն էր, եւ զօրավար մը՝ Մելիսէն տոհմէն:

Թէոկտիստի սպանութիւնը տեղի ունեցաւ պալատին մէջ, երբ ան իր առվորութեան համաձայն, առաւօտուն, Արիոքենդի բաղնիքէն ելլելով կը պատրաստուէր կայսերական դիւանատունը մտնել: Թէոկտիստ՝ հոն իր գէմը պտաւ Միքայել կայսրը, իր սենեկապետին՝ Դամիանոսի հետ, որոնք իրեն արգելեցին կայսրոսին մօտ յաւանդելու անհրաժեշտութիւնը: Այս դէպքը կը պատահէր 856 թուականին¹⁹:

Ներքինին սպանութենէն վերջ, Միքայել կայսր եւ Վարդ կեսար անմիջապէս Ծերակոյտը նիստի կանչեցին:

Ծերակոյտը՝ կայսրուհի Թէոդորայի հաշուետուութիւնը իմանալէ վերջ, հուշակեց Միքայելը միահեծան ինքնակալ եւ սպանուած Լոգոթետին պաշտօնը տրուեցաւ Վարդի փեսային՝ Սմբատին:

Պետական այս հարուածէն վերջ, Թէոկտիստի թէոդորան կորսնցուց կայսրութեան կառավարութեան ղեկը, քայքայ՝ որպէս Մայրկայսրուհի՝ մնաց կայսերական պալատին ճակատագրի իր յարկաբաժին մէջ: Սակայն իր իշխանութիւն գոտարերը՝ Թեկը, Աննա եւ Անաստասիա ղրկուեցան Ոսկեղջիւրի եզերքը գտնուող Կարիայի վանքը (այժմ Այաքափու): Իսկ Պողոքերիան ղրկուեցաւ Գաստրիայի

19. Ն. ԱՅՈՆԵ, ԳԵ. ԳԵ., Էջ 430-432:

վանքը, որ նախապէս Մամիկոնեաններու ապարանքը եղած էր, Սամաթիոյ Թադամասին մէջ²⁰:

Միքայել Գ. միշտ ցոյց տուաւ ազնիւ վերաբերում մը իր մօր հանդէպ եւ փորձեց զինքը միխթարել: Բայց՝ խրոխտ Մամիկոնեան Թէոդորան հանդիստ չմնաց: Թէոկտիստի սպանութեան եւ իր կայսրուհիի դիւրքին կորուստին վրէժը զինք կ'ուսէր: Եւ անխոհեմութիւնը ունեցաւ դաւադրելու նոյնիսկ իր իսկ հարազատ եղբոր՝ Վարդ կեսարի կեանքին: Կայսերական պալատին Ախոռապետին (Պրոտոստրատոր) մեղսակցութեամբ, փորձեց սպաննել տալ Վարդ կեսարը, երբ ան իր ապարանքէն ձիով պալատ կ'երթար: Բայց դաւադրութիւնը չյաջողեցաւ եւ բոլոր դաւադիրները ձերբակալուեցան ու զըլխատուեցան. անոնց հետ՝ նաեւ Ախոռապետը:

Կայսերական Ախոռապետի պաշտօնը տրուեցաւ Վասիլ հայուն՝ որ Արշակունեանց տոհմէն էր: Այս նշանակումը ճակատագրական եղաւ Թէ՛ Ամորեան կայսերական գերդաստանին, Թէ՛ Մամիկոնեան տոհմին եւ առ հասարակ բիւզանդական կայսրութեան համար:

Թէոդորա մասնաւոր պաշտամունք մը ունէր Վասիլին (Ս. Աստուածածին եկեղեցիին (այժմ՝ Աթիք Մուսթաֆա փաշայի մզկիթը) Ս. Կոյսի նշանաւոր եւ հրաշագործ (παναγία ὁδηγητρια)²¹ պատկերին եւ յաճախ հոն կ'երթար անոր առջեւ աղօթելու: Անյաջող դաւադրութենէն վերջ ալ, ան իր սովորութեան համաձայն շարունակեց Ս. Աստուածածնի եկեղեցին երթալ: Եւ օր մը՝ 23 Նոյեմբեր 858ին՝ եկեղեցիին ճամբուն վրայ, իր եղբայրը Պետրոնիոս զինք ձերբակալեց, Միքայելի եւ Վարդի հրամանով²²: Այս անգամ իրեն պարտադրեցին կայսերական պալատը ձգել եւ իր աղջիկներուն մօտ՝ Կարիայի վանքը մտնել, որպէս կրօնաւորուհի՝ յետ մազերը խուզելու: Բայց Միքայել, իր մօրը հանդէպ միշտ որդիական զգացումներով լեցուն, Թոյլատրեց որ մայրը եւ քոյրերը՝ երբ փափաքէին՝ ազատ ըլլային երբեմն Ս. Մամասի պալատը երթալու, որպէս դքսանք:

Թէոդորա, Կարիայի վանքին մէջ, երկար ապրեցաւ եւ տեսաւ իր եղբոր՝ Վարդի եւ իր որդւոյն՝ Միքայելի սպանութիւնները: Ան՝ Թէոկտիստի սպանութեան օրը՝ յուզումին առթած պայծառաստեղծութեամբ նախազգացած էր, երբ կը պոռար եղբորը երեսին. «Դո՛ւն՝ նախանձոտ եւ չարախնդիր տեւ, դո՛ւն արատաւորեցիր իմ մաքուր եւ անբիծ իշխանութիւնս: Վերը Աստուած կայ՝ որ կը տեսնէ գործուած ոճիրները, եւ ձեր երկուքին համար՝ նոյն բռնի մահն է որ

20. Հմմտ. ԱՅՈ, Էջ 434:

21. «Պանագիա Հողիգիտորիա» կը նշանակէ «Ուղեցոյց Աստուածածին»: Բիւզանդիոնի մէջ՝ գինուորներու պատերազմի երգն էր «Ուղեցոյց Աստուածածին»ի ձօնուած տաղը՝ «Ամենայաղթ Մայր, որ կ'առաջնորդէ դէպի յաղթանակ»:

22. Տես BURY, History of the Eastern Roman Empire, App. VII:

Ան կը նախապատրաստէ»²³։ Երբ կ'ըսէր «ձեր երկուքին»՝ կ'ակնարկէր իր որդւոյն Միքայէլին ալ։

Եւ արդարեւ, Վարդ սպաննուեցաւ 21 Ապրիլ 866ին կայսերական վրանին մէջ, Միքայէլի ներկայութեան եւ անոր լուռ համախոհութեամբը։ Այս պատահեցաւ երբ քիւզանդական քանակը կ'արշաւէր դէպի Կրետէ կղզին, զայն Արաբներու ձեռքէն առնելու համար։ Կեպիի դաշտին քանակատեղին էին, եւ Վարդ կեսար՝ որպէս դահաժառանգ կ'ընկերանար կայսեր։

Դաւադրութեան պետերն էին՝ Վարդի փեսան Սմբատ եւ Նոր Ախորապետ Վասիլ հայր։ Եւ որովհետեւ մարդասպան դաւադիրները չէին համարձակեր Վարդի վրայ ձեռք բարձրացնել, ինքը՝ Վասիլն էր որ առաջ անցաւ եւ սպաննեց Վարդը. ասոր վրայ միւս դաւադիրները վազեցին Վարդի վրայ եւ զայն պատառ պատառ ըրին²⁴։

Այս սպանութենէն քիչ առաջ, Թէոդորա իր վանքին խորքէն՝ Վարդի զրկած էր խորհրդաւոր պատմուճան մը որպէս նուէր։ Ան կարճ գրեթէ մըն էր, որու վրայ ոսկի թելով քանուած էր կաթաւ մը։ Կաթաւը նենդութեան խորհրդանշանն էր, իսկ սրբատիկ կարճութիւնը կ'ուզէր հասկնայ թէ Վարդի օրերը կարճացած էին։ Միթէ Թէոդորա տեղեակ էր պատրաստուած դաւադրութեան։ Անհաւանական չէ ահկա, նկատի առած՝ Թէոդորայի վրէժխնդիր եւ աններող ոգին։

Վարդ կեսարի սպանութենէն գրեթէ տարի մը վերջ, 4 Սեպտեմբեր 867ին, Թէոդորա ճաշի հրաւիրեց իր որդին՝ Միքայէլ կայսրը, Ս. Մամասի պալատին մէջ, ուր երթալու արտօնութիւն ստացած էր Միքայէլէն։ Հոն՝ ճաշի պահուն՝ նոյն Վասիլ հայէն կը սպաննուէր Միքայէլ, Թէոդորայի աչքերուն առջեւ։ Այսպէսով վերջ կը տրուէր Սմորեան կայսերական գերդատանին։

Կ'երեւի թէ քիւզանդական ձեւ մը ըլլար, հակառակորդէ մը ադատելու համար, զայն սպաննելը՝ ճաշի հրաւիրելով։ Միթէ նոյն ձեւով չէր որ քիւզանդացի Տերենտիոս կոմսը սպաննել տուաւ մեր Պապ Թադաւորը 374ին, անոր ի պատիւ տրուած հացկերոյթի մը պահուն։ Աւելի ուշ, Միջին Դարուն, այս ձեւի սպանութիւնները կատարելագործուեցան Իտալիոյ մէջ, ուր սակայն նստընտրութիւնը կը տրուէր աւելի թոյնին քան թէ սուրին՝ նման պարադաներու մէջ։

Կայսերապան Ախորապետը Վասիլ ինքզինք հռչակեց կայսր, Վասիլ Ա. անունով։ Պատմութիւնը իրեն տուաւ «Մակեդոնացի» մականունը։

Այս ոճերներուն ականատես ըլլալէ ետք, Թէոդորա մեռաւ 867ի

23. THEOPHANES CONTINUATUS, I. IV, 20, pg. 121; Ն. ԱԴՈՆՑ, Բ2. գծ. էջ 432։

24. Ամ, էջ 351։

վերջերը, Կարիայի վանքին մէջ. բայց Վասիլ կայսրը զայն թաղել տուաւ Կասդրիայի վանքին մէջ։ Թէոդորա մօտաւորապէս 63 տարեկան էր՝ երբ մեռաւ։ Քիւզանդական Եկեղեցին զինք սրբուհի հռչակեց՝ պատկերապաշտութիւնը վերահաստատած ըլլալուն համար։

Երեսունվեց տարուան կայսերական իշխանութեան ընթացքին՝ Թէոդորա փայլեցաւ սկիզբները աննման ճաճանչով մը. ի՞նչ խօսք որ իր իշխանութեան վերջին տարիները մթաղնեցան եւ արիւնոտ չուք մը եկաւ ծածկել իր ճաճանչները, տիրապետելու անդուսպ մարմաջէ մը մորուած եւ նենդամիտ ներքինիի մը սխալ խորհուրդներէն առաջնորդուած։

* * *

Ը. դարու վերջին կէսէն կը սկսի Հայոց գերակշիռ դերքը Բիւզանդիոնի մէջ եւ որ գրեթէ իր գազաթնակէտին կը հասնի Թ. դարուն։

778ին Փոքր Ասիան բաժնուած էր քիւզանդական չորս թեմերու, որոնց սպարապետներէն էին՝

Արտաւազդ՝ սպարապետ Անատոլիկեան թեմի բանակին,

Տաճատ՝ սպարապետ Բուկերլարեան թեմի բանակին,

Վաքազտիքոս՝ Բաղրատունեաց տոհմէն, սպարապետ Արմենեական թեմի բանակին,

Գրիգոր՝ որդի Մուշեղակի՝ սպարապետ Օփսիկեան թեմի բանակին²⁵։

Արդէն, 2. դարուն, Մեծն Յուստինիանոսի բանակները գրեթէ հայ զորավարներով եւ հայ զինուորներով կը հիւսէին դափնիներ կայսերական թաղին։ Ներսէս ներքինին՝ փոխարքայ Իտալիոյ, Ներսէս Բասենցին՝ Եփեսոսի բանակին սպարապետ, Արտաւազդը՝ որ Լոմբարդացիներուն յաղթեց եւ Վերոնա քաղաքը գրաւեց, Իսահակ Հայկազն՝ փոխարքայ Հուսեննայի, Սմբատ՝ մոնոստրատիզոս Մակեդոնիոյ, Թրակիոյ եւ Լոմբարդիոյ, եւայլն։

Թ. դարուն եղաւ պահ մը՝ ուր քիւզանդական կայսրութիւնը ամբողջութեամբ ստնուեցաւ Հայոց ձեռքը. կայսրուհին՝ Մամիկոնեան մը, Տիեզերական Պատրիարքը՝ Յովհաննէս հայր, սպարապետը՝ Մանուէլ Մամիկոնեան, Համարսարանի վերատեսուէր՝ Լեւոն Հայկազն, կայսրութեան արտաքին քաղաքականութեան վարիչը Թէոդորոս Բարուցիկ՝ եղբայրը Կոստանդին Բարուցիկին՝ որ կայսրուհիին Սոփիա քրոջը ամուսինն էր, դահաժառանգը՝ Վարդ կեսար։

Նման պահեր կրկին պատահեցան Թ. դարուն ալ, երբ նորէն կայսրութեան պետական մեքենան անցաւ Հայոց ձեռքը. կայսրը Հոռ-

25. Այս անուանակոչումներու մասին տես Ն. ԱԴՈՆՑ, Բ2. գծ. էջ 362։

մանոս Լեկապենոս՝ հայ, Պատրիարքը՝ հայ, կայսեր որդին՝ Թէոփիլակտոս, եւ սպարապետը Կուրկուս (Գուրգէն)՝ նոյնպէս հայեր:

Բիւզանդական կայսրութիւնը՝ Հայոց տիրապետութեան շրջաններուն է որ զրեց իր պատմութեան ամէնէն փառահեղ էջերը, Լեւոն Ե.ի, Վասիլ Ա.ի, Նիկեփոր Փոկասի, Չմշկիկի, Վասիլ Բ.ի օրերուն²⁶:

Բիւզանդիոնի մէջ՝ հայկական ազդեցութեան տկարացումը եւ վերջ ի վերջոյ չբացումը կապուած են պատմական երկու կարեւոր իրադարձութիւններու: Նախ այն պարագային՝ որ սերճուքեան արշաւները Հայաստանը Բիւզանդիոնէն խզեցին, եւ ապա՝ հայ բազուկին դէպի Կիլիկիա դադարին, ուր ան կը հիմնէր նոր հայկական պետութիւն մը, յաճախ կոռուի մէջ՝ նոյն այդ Բիւզանդիոնին դէմ: Այլեւս Հայերը վստահելի տարր մը չէին ներկայացներ Բիւզանդիոնի համար, որպէսզի հոն կարենային տիրանալ բարձր դիրքերու: Արդէն Յովհաննէս Կոմնենոս կայսրը կը զերէր Կիլիկիոյ Լեւոն Ա. իշխանը, Մանուէլ Կոմնենոս կը կոռուէր Լեւոնի որդի՝ Թորոս Ա.ին դէմ, զոր 1156ին իր իշխանութեան կ'ենթարկէր, մինչ 1159ին Բիւզանդացիները նորէն պատերազմի մէջ էին Կիլիկիոյ հայերուն հետ:

Բիւզանդիոնի մէջ հայոց թողած պարապը՝ բիւզանդացի յոյներն էին որ կը լեցնէին, ոչ նոյնքան յաջող կերպով: ԺԳ. դարուն հոն տիրեց եւրոպացի իտալացիներուն ամբոխը, որոնց վրիսաւոր մտահոգութիւնը եղաւ Բիւզանդիոնի թալանումը: Իտալացիներէն վերջ Բիւզանդիոն եղաւ թաւր՝ իրար հալածող բիւզանդացի յոյն (հոռոմ) տոհմերու սնապարծութիւններուն, մինչեւ որ Ասիոյ խորքերէն եկած Ժողովուրդ մը՝ օսմանցի թուրքերը, ԺԵ. դարուն կէսին, վերջ դրին բիւզանդական կայսրութեան եւ հոն տեղաւորեցին մահմետական օսմանեան կայսրութիւնը, հակառակ որ 1453ին Կոստանդնուպոլիսը զրաւող՝ Յաթիհ Մեհմետ Սուլթանը կը խորհէր շարունակել «հոռոմէական» կայսրութիւնը եւ իր դրօշին վրայ մինչեւ իսկ կը զետեղէր բիւզանդական մահիկը, Աստղիկ զիցուհին նշանը:

Ս. ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ

26. Բիւզանդական կայսրութեան մէջ Հայերու այս բացառիկ դերին եւ ազդեցութեան մասին տես P. CHARANIS, 62. գծ., ուր Հեղինակը չի վարանիր մինչեւ իսկ «Եւրոպական» կայսրութիւն որակել Բիւզանդական կայսրութիւնը (էջ 57): Տես նաեւ՝ L. B. ZEKIYAN, *Le colonie armene del Medio Evo in Italia e le relazioni culturali italo-armene*, «Atti del I Simposio Internazionale di Arte Armena», Venezia 1978, էջ 820-823:



Թէոդորայի մայրը՝ իր քոռնուհիներուն համբուրել կու տայ սրբազան պատկերներ, այցելութեան մը պահուն: Զայնի՝ առաջինը նոյնիմէն Թէոդորան է, աջին՝ առաջինը Թէոդորայի մայրն է, երկուսին միջեւ՝ Թէոդորայի չորս աղջիկները՝ Թեկզ, Աննա, Անաստասիա եւ կրտսերագոյնը՝ Պողոսիկ, որ պատկերը համբուրելու վրայ է: (Մանրանկար՝ Սկիլիցէսի Պատմութեան ձեռագրէն, Մատրիտի Ազգ. Մտնդրն.):

Գեղարքունիքի
Հրահանգ
Կրթության
և Գիտության
Նախարարության
Հրահանգ
Հրահանգ

Պատվով երևա հարգանքով և շնորհակալությամբ
հրահանգող, Կրթության և Գիտության
Նախարարության ղեկավարը, Կրթության
և Գիտության նախարարը:

Պատվով երևա հարգանքով և շնորհակալությամբ
հրահանգող, Կրթության և Գիտության
Նախարարության ղեկավարը, Կրթության
և Գիտության նախարարը:

Չորսուցից թվականին
հունիսի 1-ին
հրահանգող, Կրթության
և Գիտության
Նախարարության
ղեկավարը, Կրթության
և Գիտության
նախարարը:

Պատվով երևա հարգանքով և շնորհակալությամբ
հրահանգող, Կրթության և Գիտության
Նախարարության ղեկավարը, Կրթության
և Գիտության նախարարը:

Կրթության
և Գիտության
նախարարը:

Պատվով երևա հարգանքով և շնորհակալությամբ
հրահանգող, Կրթության և Գիտության
Նախարարության ղեկավարը, Կրթության
և Գիտության նախարարը:

Կրթության
և Գիտության
նախարարը:

